

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԻԱՐԱԿ

Ե Բ Ե Վ Ա Ն

Խ 8

1 9 6 7

ԱՍԴԻԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԼԵՎՈՆ ԵՐՐՈՐԴ ԹԱԳԱՎՈՐԻ ԱՎԵՏԱՐԱՆԸ

Նոր Նախիչևանի ձեռագրերից Մաշտոցյան մատենադարանում պահպում է շուրջ 369 ձեռագիր, նաև պատասխկներ՝ ձեռագրերից կտրաված մասունքներ:

Եղել են զրբի արժեքն իմացող մարդիկ, որոնք պատասխկները կորսուից փրկելու համար դրանք միացրել են իրենց մոտ եղած պատահական ձեռագրին, կամ էլ քայլայիված ու մաշված հին ձեռագրից մնացած թիրթերը լրացրել են նոր ձեռագրով, երբեմն էլ անվնաս մնացած նկարները կարառել ու փուլցրել են ուշ շրջանի մի նոր ձեռագրի էջերին:

Այդ բախտն է վիճակիվել նաև Կիլիկիայի Հեթում թագավորի (1227—1270) որդի՝ թագածառանգ Անոն Գ-ի դիմանկար պատասխկին:

Հայ միջնադարյան դիմանկարչության համար արժեքավոր այս նկարի մասին հիշվել է մի շաբթ ուսումնասիրություններում, սակայն այդպիս էլ անլուծելի է մնացել այն հարցը, թե ո՞ր ձեռագրին է պատկանում նա:

XIII դարի երկրորդ կեսին Հռոմելայի գրչության կենտրոնում ստեղծվեցին Հայկական սքանչելի ձեռագրեր, որոնց մեծ մասի պատվիրատուն Կոստանդին կաթողիկոսն էր՝ ձեռագրական արվեստի զարգացման զործում նշանակալի դեր ունեցած հիշարժան մի գործից: Նրա պատվիրած մատյաններից մեկն էլ իր սան՝ Հեթում թագավորի որդի պատանի Անոնի նվիրած ամենայն է, որտեղ պատվիրատուն նկարել է տվել Անոնի դիմանկարը, նրան ուղղելով իր ձոնը: Այս ավետարանը Կիլիկյան որիշ շատ ձեռագրերի հետ միասին տարիվել է Ղրիմ, այնտեղից էլ նոր Նախիչևան և պահպիլ ու Լուսավորչի եկեղեցում:

Ձեռագրի մասին առաջին հաղորդմանը հանդիպում ենք Սարգիս արքեպիսկոպոս Զալալյանցի 1846 թվականին նոր Նախիչևան կատարած ալցելության նկարագրության մեջ: Այսուղ Զալալյանցը հիշատակում է նաև Անոնի նկարը պարունակող ձեռագիրը:

«Մինն յայսոցիկ աւետարանաց էր զրեալ ձեռամբ Կոստանդիանոս կաթողիկոսի Կիլիկեցույ, յորում նկարեալ է նոյն կաթողիկոսն զպատկեր Հեթում թագաւորի արքայական ծիրանաւ: Յաջ և յահեակ այնր պատկերի զրեալ է. «Անոնի որդույ Հեթում թագաւորի»¹: Եղերք ծիրանույն են ուկեննկարը, և ի ծայր

¹ Զալալյանը ձեռագրի պրիչ և ծաղկող է համարում Կոստանդին կաթողիկոսին: Նա սխալ գել է նաև, Անոնի պատկերը համարելով «զպատկեր Հեթում թագաւորի», մի սխալ, որի մասին Հետազոտում ակնհարկել է Մ. Տեր-Մովսիսյանը (Հայկական մանրանկարներ, «Ազգագրական Հանդես», Թիֆլիս, 1910, № 2, էջ 15) վերցինս, սակայն, պատասխկը նկարագրելիս զրում է, «Նկարի աջ և ձախ բաց մնացած տարածության վրա ուկե պլիազիր տառերով դրված է «Եւոն որդի Հեթում թագ.»: Երականում մակագրությունը արված է ոչ թե ոսկյա տառերով, այլ՝ ոսկյա չոնի վրա՝ կապույտ ներկով:

ծիրանւոյ տախւծածի նշանը, նույնպէս և ի վերայ երկուց ծղաց: Ի ներքոյ նոյն պատկերի գրի ոսկեղօծ տառիւր ձեռամբ նոյն կաթողիկոսի.

«Տեսան Կոստանդնուպոլիսի կաթողիկոսի,
Զաւետարանս այս բաղձալի,
Շնորհեալ սանոյն իւր Լևոնի
Արգւոյ Հեթմայ թագաւորի
Առ ի նշան արքայութեան
Դատել բատ Հաւատոյ դաւանութեան,
Ուղղափառոց եղեալ սահման,
Ի յիշատակ իւր յաւիտեան»²:

Մեջ բերված նկարագրությունից երեսում է, որ Զալալյանցը անձամբ տեսել է այն ձեռագիրը, որի մեջ եղել է Լևոնի զիմանկարը, ձռնի Հետ միասին: Սակայն նա չի խոսում ո՛չ ձեռագրի հիշատակարանի և ո՛չ էլ գրության տեղի ու ժամանակի մասին:

Զալալյանցից հետո, 1902 թվականին, «Հումա» ամսագրում, Գարեգին Հովսեփյանը Հրատարակում է Լևոն Գ.-ի զիմանկարը ձռնի Հետ միասին (նկ. N 1) և այդ առթիվ գրում.

«Մագաղաթյա սույն երկթերթը առնված է մի զրչյա ավետարանից, որի մասին առաջին անգամ տեղեկություն է տվել Սարգիս արքեպիսկոպոս Զալալյան յուր ճանապարհորդության Բ մասի մեջ, եր. 457: Չեռագիրը այժմ էլ գրտնրվում է նոր Նախիջևանի Լուսավորիչ եկեղեցու պահարանում: Ինձ Հայունի չէ, թե ե՞րբ, ում ձեռորով են պոկիած այս թերթերը և Մայր Աթոռ բերված: Այս թանկագին պատառիկը այժմ սրբությամբ պահպանվում է Մայր Աթոռի եկեղեցական թանգարանում, բայց ցանկալի էր ամբողջ ձեռագիրը Մայր Աթոռ փոխագրել և պոկիած պատառիկը նորից հաստատել յուր սկզբնական տեղում»³:

Հետազայում պարզվեց, որ Գարեգին Հովսեփյանի նկարագրած «մագաղաթյա սույն երկթերթը» որի սոսկ նկարն էր ունեցել Հովսեփյանը, եղել է ոչ թե ձեռագրի պատառիկը, այլ նկարիչ Արծաթպանյանի կատարած ընդօրինակությունը, այն էլ ոչ թե մազաղաթի: այլ թղթի վրա: Այդ ընդօրինակությունը նկարիչը նվիրել էր մայր Աթոռին⁴:

Գիմանկարի ընագիրը պատառիկին անդրադարձել է նաև Երվանդ Շահապիկը: 1903 թվականին, երբ նա ցուցակագրում էր նոր Նախիջևանի ձեռագրերը, մատնանշում է նաև Լևոնի նկարի մասին: Նա գրում է,

«Մեզ մատնացույց արին, օրինակի Համար բաղարիս ս. Աստվածածին եկեղեցու քահանաներից մեկի վրա, որ մի ժամանակ տիրացու է եղել ս. Լուսավորիչ եկեղեցում: Դա, այդ Հայ եկեղեցու պաշտոնյան պոկել, տուն է տարել ընտիր ձեռագրերի մեկի միջից Լևոն երրորդի պատկերը և իրեն զարդ կախել է յուր ընակարանի պատից»:

2 Մարդիս արքեկող. Զալալյանց, Ճանապարհորդութիւն, Հ. Բ., Տիֆլիս, 1857, էջ 457:

3 Գ. Հռվիսեփյան, Մանրանկարչության արվեստը Հայոց մեջ (Լևոն Գ.-ի պատկերի առիվ), «Հումա», N 1, Թիֆլիս, 1902, էջ 199.

4 Գ. Հռվիսեփյան, Յիշատակարանը ձեռագրաց, Անթիլիաս, 1951, էջ 1006:

ՄԵծ դժվարությամբ հաջողվում է մի երիտասարդի հետ վերցնել նկարը այդ քահանայից⁵. Շահազիզը մեզ է բերում իր և քահանայի միջև տեղի ունեցած խոսակցությունը.

ՄԱՍԻՆԱԿԱՐՉ. ԱՐԹՈՒՐԱՏԻ

197

Առկան մ. Պարու իշխանից արդին լուսուց մանրանելուր ներ ունինք, ինչ ու ապարազգաբար ոչ բազմ թիւ և նաև մասնակի մասնակի բնաւորության մեջ ու դրանք է 1559 թ. բիուն օնդական արտևանի իրաւուքիւն մեջ և անցանելու մասնակի անի, ապարազգաբար մը քանիւր դաշտաւած և համ արդարաւութեամբ պահ ան Այս առևտարանուր սապհանաւութիւն է նույն անրահանութաւու, Երիզուր ազգին և Հա աբժեկացի ուրիշ հայրապետների և իր լուսուե պատմութիւններ, որի սապիւթանք ներ, առիթ կանենաց մը անզամ զրելու Դուց ժամանակ դարձ ինչ Պարիզուրի կաթողիկոսի անդամանութիւն նորած Երիզուր առան ուներանի հասլույ ժապավածուն, ընտելու



Մըջին երկաթազգութ և մանրապարզերութ, հեմադրամներ կամ առամ, որովհետ հաստատան թուսկան շանի ձեռապիւթու, ու մը քանի ան ինչու առաջազգի Վերի գորես կաթողիկութանուր անաւուր և առանց լիւստամբարանի. Ձեռապրելու մ. Պարու, քազ ալզապիսիներ, և նկատի չունինք Սեծն Հայուսանի նուպաւ ձեռապիրները շատ անկաւաթիւնն ուրաց մ. Պարիզ և լիշել նաւենու և ափաթանց թագաւորի և նորա թագուհու Խորիշանի առաւարանը, թարզմանուաց պատմի առեաւարանը, Սովուալուրների Բնի իշխաններից մէկի առեաւարանը, ամենցն էլ թանգապին և կարեսը մանրանկարչական նորութառի պատմութեան ուսումնաբրութեան համար.

Մանրանկարչական արտևանի և հայ զրչաթեան ծաղկաւ ունեպարդ պիտի համարել Փ. Պարու վերջներից մինչև

Նկ. 1

«Աղբար, պատասխանեց նա մեղ յուր աղճատ բարբառով, — զրում է անպանի բանասերը, — ո՞վ գիտեր այն ժամանակները դոցա զինը և արժեքը. մենք ձեզ պես ուսումական շենք, որ այդպիսի բաներ հասկանանք, ձեռագրերի պես հնությունները գնահատենք: Դրինը թափված էին խորանի հետեւ, ով կուզեր, կնայեր, ով կուզեր, տուն կտաներ, ո՞վ էր նոցա վերա ուշադրություն դարձնութ: Տեսա այդ զիրքը — սյուրեթներ կային մեջը. այդ պատկերին հավանեցի, որովհետեւ մյուսները սուրբերի պատկերներ էին, իսկ այդ մեկը — թագավորի: Առա կտրեցի, բայց ոչ առանց թուլլտվության»⁶:

5 b. Շահազիզը շի տալիս այդ երիտասարդի անունը:

6 b. Ծահ ա դ ի զ, Պատմական պատկերներ, Թիֆլիս, 1903, էջ 83:

ինչպես տեսնում ենք, Աւոնի նկարը 1903 թվականին արդեն իր մայր ձեռագրում չէր գտնվում: Այն պոկված է եղել տարիներ առաջ, երբ զեռևս եկեղեցիների խորանների հետեւմ անխնամ թափված էին ձեռագրերը, և երբ ու Աստվածածին եկեղեցու քահանան դեռ տիրացու էր ու Լուսավորիչ եկեղեցում:

1910 թվականին, Մեսրոպ Կափիսկոսոս Տեր-Մովսիսյանը «Հայկական մանրանկարներ» հոդվածում խոսում է Աւոն Գ թագավորի, Կեռան և Մարիան թագուհիների և Խամբառյան Վասակ իշխանի՝ Աւոն Գ-ի հորեղբոր, նրա երկու որդիների գիմանկարների մասին: Հոդվածում զետեղված է նաև Աւոն Գ-ի պատանեկության նկարը, բայց արգեն կտրված վիճակում, որի լուսանկարը, Տեր-Մովսիսյանի խնդրանքով, նոր Նախիջևանից նրան էր ուղարկել Հրաշյա Աճառյանը: Տեր-Մովսիսյանը հիշատակում է, որ 1903 թվականին, երբ ցուցակագրել է նոր Նախիջևանի բոլոր եկեղեցիների ձեռագրերը, իրեն հայտնել են, որ Աւոն թագավորի պատկերը քաղաքի անիրավ քահանաներից մեկը (կարծեմ տեր Մարգիս) կտրել տարել է յուր տունը և շրջանակի մեջ զրած պահում է: Նկարը բերվեց և նորից միացրվեց ավետարանին⁷, — զրում է Տեր-Մովսիսյանը: Թիւ Երվանդ Շահազիզը և թիւ Մեսրոպ Տեր-Մովսիսյանը, միաժամանակ, այսինքն 1903 թվականին, լինելով նոր Նախիջևանում և զբաղվելով ձեռագրերի ցուցակագրման աշխատանքով, հիշատակում են, որ այդ ժամանակ, իրենց ներկայությամբ, բերվել է Աւոնի նկարը և տեղադրվել ձեռագրում: Սակայն, տարօրինակ է, որ նրանցից յուրաքանչյուրը տարբեր ձեռագիր է մատնանշում: Տեր-Մովսիսյանի ցուցմունքով, նկարը պատկանում է նոր Նախիջևանի № 14 ձեռագրին, իսկ Երվանդ Շահազիզը վերագրում է № 2 ձեռագրին:

Նախիջևանի № 14 ձեռագիրը այժմ Մաշտոցյան մատենագարանի № 7663 մագաղաթյա ավետարանն է, զրված և նկարագարված 1297 թվականին: Նկարագրդել է Գրիգոր քահանան՝ Մարգիս Պիծակի հայրը: Զեռագիրը վերջում ունի այդ մասին ընդարձակ հիշատակարան: մեծությունն է $21,5 \times 14$ սմ:

Նախիջևանի № 2 ձեռագիրը, նախկին՝ Երևանի զրական թանգարանի № 84, իսկ այժմ Մաշտոցյան մատենադարանի № 7690 ձեռագիրն է: Գրված և նկարագրված է 1249 թվականին, Հռոմեական նշանավոր զրիշ և ծաղկող Կիրակոսի ձեռքով: Զեռագիրը մագաղաթյա է, մեծությունը $16 \times 11,5$ սմ, ունի զունանկարչութեն արված ավետարանիշներ և անվանաթերթեր:

Պարզելու համար, թիւ այս Երկու ձեռագրերից որին է պատկանել նկարը, նախ որոշենք, թիւ Աւոն Գ-ի նկարվելիս մոտավորապես քանի⁸ տարեկան էր և հետեւաբար ձեռագիրը ո՞ր թվականին պետք է զրված լիներ:

1238 թվականի Կիլիկյան ավետարաններից մեջի հիշատակարանից հայտնի է, որ Հեթումի և Զավելի որդի Աւոնի ծնվել է 1236 թվականին⁹: Քանի որ ավետարանը Կոստանդին կաթողիկոսը նվիրել է իր սան՝ թագաժառանդ Աւոնին, նշանակում է Աւոնի այդ ժամանակ պատանի էր: Ըստ Գարեգին Հովհաննի

7 Մ. Ե պ ի ս. Տ ե ր Մ ո վ ս ի ս յ ա ն, Հայկական մանրանկարներ, «Ազգագրական հանդես», Բիբլիա, 1910, № 2, զիրք XX, էջ 15:

8 Գ. Հ ո վ ս ե պ ի ս յ ա ն, Յիշատակարանը ձեռագրաց, էջ 929:



Առն Գ-ի դիմանկար

նկարից դատելով՝ 15—17 տարեկան⁹: Նույն կարծիքին է նաև Տեր-Մովսիսյանը¹⁰:

Այլ է, սակայն, Երվանդ Շահազիդի կարծիքը: Նա գտնում է, որ Լևոնը նկարում ալեղարդ մազերով միշտահասակ մի տղամարդ է¹¹:

Եթե Լևոնի նկարի Շահազիդի կատարած մանրակրկիտ նկարագրությունը ամենայն մանրամասնությամբ շնորհատասխաներ քննարկվող նկարին, տպա կարելի կլիներ ենթադրել, թե Շահազիդը տեսել է բոլորովին մի այլ պատկեր:

Իրողությունը մնում է այն, որ Կոստանդին կաթողիկոսը ավետարանը պատվիրել է իր սան Լևոն Գ թագաժառանգի համար որպես դասագիրը, Երբ նա դեռ 15—17 տարեկան էր, հետեւարար պետք է նկարված լիներ մոտավորապես 1252—54 թվականներին:

Հայո Մ. Տեր-Մովսիսյանի, ինչպես ասացինք, Լևոնի նկարը 1903 թվին բերվել է և տեղադրվել իր ձեռագրում, իսկ այդ ձեռագիրը ավետարանը իրը նոր Նախիջևանի ո. Լուսավորչի № 14-ն է, գրված Զեզ (1297) թվականին, նկարագարդված Գրիգոր Պիծակի ձեռքով: Տեր-Մովսիսյանի այս տեղեկությունը ենթակա է ստուգման: Այսպես, Լևոնը թագավորել է 1271—1289 թվականներին, ուրեմն նա բնակումարար շէր կարող 1297-ին լինել արդեն վաղուց վախճանված Կոստանդին կաթողիկոսի սանը:

Լ. Ազարյանը նույնպես նկատելով Տեր-Մովսիսյանի տեղեկության անստուգությունը, գրում է. «Տարօրինակ է, որ Տեր-Մովսիսյանն այս տեսել է 1297 թ. ձեռագրում»¹²:

Փորձենք գտնել Տեր-Մովսիսյանի տեղեկության պատճառը:

1910 թվականին, երբ Տեր-Մովսիսյանը ձեռնարկեց գրել թագավորական նկարների մասին իր ուսումնասիրությունը, Լևոնի նկարի մասին խոսելիս վկայակոչում է Զալալյանցին, որն առաջին անգամ նկարագրել է Լևոնի պատկերը իր ավետարանի մեջ տեսնելով:

Զալալյանցն իր գրքում, Լևոնի ավետարանի նկարագրությունից անմիջապես հետո, գրում է. «Ե յիշատակարանի աւետարանի միոյ գրելոյ ի թուին Զեզ (1297)...» և մեջ է բերում նոր Նախիջևանի № 14 ձեռագրի հիշատակարանն ամրողությամբ:

Հավանաբար, Տեր-Մովսիսյանը թյուրիմացարար, Լևոնի ավետարանի նկարագրությանը անմիջապես հաջորդող այս հիշատակարանը վերագրել է նրան և այստեղից էլ առաջացել է այն թյուրիմացությունը, որ իրը Լևոնի նկարը պատկանել է Նախիջևանի № 14 ձեռագրին:

Գարեգին Հովսեփյանը 1943 թվականին գրած իր ուսումնասիրության մեջ, Լևոնի ավետարանի մասին խոսելիս, հիշատակում է դարձյալ № 14 ձեռագիրը և, Տեր-Մովսիսյանի սիալմունքը հիմք ընդունելով, նույնպես գրում է. «Ավետարանի հիշատակարանը կորած է, ուրեմն և ճիշտ թվականը որոշել կարող չենք»:

⁹ Գ. Հ ռ պ ս ե փ յ ա ն, Երևան և ուսումնասիրություններ Հայ արքաների և մշակույթի պատմության, պրակ. Բ, Երևան-Յորք, 1943, էջ 20:

¹⁰ Մ. Կ պ ի ս. Տ ե ր-Մ ո վ ս ի ս յ ա ն, Հայկական մանրանկարներ, «Ազգագրական հանդես», Թիֆլիս, 1910, № 2, գիրք 20, էջ 14:

¹¹ Ե. Շ ա հ ա ղ ի դ, Պատմական պատկերներ, Թիֆլիս, 1903, էջ 96:

¹² Լ. Ա զ ա ր յ ա ն, Կիլիկյան մանրանկարչությունը 12—13 դդ., Երևան, 1964, էջ 95:

Տարիներ հետո, 1951 թվականին, նա իր «Հիշատակարանք ձեռագրաց»—ում նշում է, որ Լևոնի նկարը տեսել է նոր Նախիջևանի № 2 ձեռագրում: Բայց, քանի որ ձեռագրի գրության ժամանակ Լևոնն ընդամենը 13 տարեկան էր, ուստի Գարեգին Հովսեփյանն այն կարծիքն է հայտնում, թե Լևոն Գ-ի պատանեկության այս պատկերը նկարված է սույն ձեռագրի գրությունից հետո՝ ձեռագրի կազմելու ժամանակ (1255 թ.):

Լևոն Գ-ի պատկերի այս առեղջվածով զբաղվել է նաև Լևոն Աղարյանը: Նա իր «Կիլիկյան մանրանկարչությունը XII—XIII դարերում» աշխատության մեջ, թորոս Ռուսլինին վերագրվող ձեռագրերի մասին խոսելիս, հիշատակություն է անում նաև Լևոն Գ-ի դիմանկարի մասին, զրելով, որ Կոստանդինը որպես Լևոնի գաստիարակ, իր սանին է նվիրում 1250 թվականին զրված ավետարանը, Լևոնի դիմանկարով: Այսուեղ Աղարյանը առաջին անգամ հայտնում է, որ Լևոնի նկարը չէր կարող պատկանել ոչ 1297 թվականի և ոչ էլ 1249 թվականի ավետարաններին և որ այս պատկանում է մի ձեռագրի որից տարաբախտարար մնացել է միայն Լևոնի նկարը:

Լևոնի նկարի խոկական տեղը գտնելու համար իր որոնումների մասին Աղարյանը ծանոթագրում է: «Մեր պրատումները, մանրանկարի խոկական տեղը և մանրանկարչի անունը գտնելու ուղղությունը, ապարզուն անցան»:

1960 թվականին մենք ձեռնարկեցինք ձեռագրերում եղած նշանավոր անձանց դիմանկարների հավաքման ու ընդօրինակման աշխատանքին: Այդ ժամանակ մեր ուշադրությունը զրավեց Մատենադարանի № 7690 (Նախիջևանի № 2) ձեռագրում դտնվող Լևոն Գ-ի դիմապատկերը:

Նկարը ձեռագրում փակցված էր առանձին հաստ դեղնավուն թղթի վրա, սակայն տեղ-տեղ պոկվել էր սոսինձը: Որովհետև մեզ հայտնի էր, որ այդ նկար-պատառիկը կորցրել է իր մայր ձեռագիրը, որոշեցինք կանխել նրա հետագա կորուստը, նորից սոսնձելով ամուր փակցնել թղթին: Նկարը պոկելիս նրա տակ նշանավորվեց մատիտով զրված մի հիշատակագրություն: Համարյա անընթեռնելի դարձած այս գրությունն ավելի լավ վիճակում արտադրվել էր այն հաստ թղթի վրա, որին փակցված էր նկարը: Եթզված ձեռվ արտադրված այս հիշատակագրության մեջ հայելու միջոցով կարգացինք հետևյալը.

«Տէր Յակոր քահանայ նախ... կարել ՈԿԳ—1212 թ. № 1 ս. Լուսավորչի աւետարանէն»¹³:

Այսուեղ հիշատակված մատյանը նոր Նախիջևանի ամենահին ավետարանն է՝ զրված Հոռմելլայում զրիշ Հովհաննես Կլայեցու ձեռքով: Մաշտոցյան մատենադարանում այն ստացել է 7570 գույքահամարը: Զեռագիրը թղթյա է, բոլոր դիր, ունի անվանաթերթեր, նկարված միագույն, կարմիր ներկով, հին հայկական զարդաձերով: որոնք վարպետ նկարչի գործ չեն: Զեռագիրի 60ր—61ա թերթերի միջև նշանավոր են կտրված երկու մագաղաթի հետքեր:

Քանի որ այս ձեռագիրը Հոռմելլայից է, առաջին հայացքից կարելի էր ենթադրել, որ հետագայում, այսինքն 1250-ական թվականներին կաթողիկոսը նկարել է տվել Լևոնի դիմանկարը և ավելացրել այս ավետարանին, իր սանին նվիրելու համար: Բայց այս ենթադրությունը անընդունելի է, որովհետև նախ Լևոնի նկարի մագաղաթը բոլորովին այլ որակի է, քան ձեռագիրը և առաջ չնա-

¹³ Զեռագիրի վրա փակցված նախիջևանի գույքահամարի տակ նույնպես զրված է ՈԿԳ—1212 թ. (իրականում 1214 թվական):

յած եղբերք կտրտված են, բայց և այնպես «Հումա»-ում տպագրված ամբողջական ընդօրինակությունից երևում է, որ դա պետք է շափերով այս ձեռագրից ավելի փոքր լիներ, և ի վերջո հազիվ թե այս թղթյա անշուր, հասարակ դարդերով ձեռագիրը, կաթողիկոսը նվիրեր թագաժառանդին:

Նկարի հետևի մակագրությունը նույնպես մեկն է այն փաստերից, որոնք ցույց են տալիս, որ Լևոնի նկարի իսկական տեղը որոշելու համար մեզնից տռաջ էլ որոնումներ են կատարվել:

1965 թվականի դարնանը, մանրանկարչական ընդօրինակման արվեստն ուսումնասիրելու կապակցությամբ, մենք համեմատում էինք XIII դարի կիլիկյան երկու ձեռագիր, որոնք գրվել են նկարագարդվել են Հռոմելայում։ Զեռագրերից մեկը մեղ արդեն ծանոթ 1249 թվականի № 7690 (Նախանք № 2) ավետարանն էր, նկարագարդված Կիբակոս գրչի կողմից, իսկ մյուսը 1251 թվականի № 3033 մի մագաղաթյա ավետարան, հարուստ մանրանկարներով, որի ծաղկողն է Վարդանը։

Այս երկու ձեռագրերի նկարների համեմատությունը ցույց տվեց, որ նրանք ոչ միայն միևնույն նկարչական դպրոցի արտադրություն են, այլև նրանց մեջ գտնվող ավետարանիշների պատկերներն ընդօրինակված են մեկը մյուսից. այսինքն՝ 1251 թվականի № 3033 ձեռագիրն ընդօրինակված է 1249 թվականի № 7690 ձեռագրից¹⁴։ Սակայն № 3033 ձեռագիրն իր սկզբում ունի սրանշելի խորաններ, որոնք չկան № 7690 ձեռագրում։ Այս հանգամանքը մտածել էր տալիս, թե արդյոք 7690 ձեռագիրը ժամանակին չի ունեցել խորաններ, որից ընդօրինակած լիներ Վարդանը։ Այս կասկածը անհիմն չէր, քանի որ 7690 ձեռագրի կազմի կարերը թուլացած և խախտված էին։

Մյուս կողմից մեզ հայտնի էր, որ Մատենագարանի № 8000 ձեռագրում փակցված են նրա հետ բոլորովին շառնչվող, XIII դարի մագաղաթյա հիանալի խորաններ։

№ 8000 ձեռագրի ժամանակը 1700 թվականն է, տեղը անհայտ (հավանաբար Ղրիմ)¹⁵, գրիշը տեր Սարգիս. թղթյա, բոլորգիր մի ավետարան է։ Զեռագրում եղած հիշատակագրություններից պարզվում է, որ այն տարբեր ժամանակներում պատկանել է տարբեր մարդկանց։


Արժեքավոր է նրա մի հիշատակագրությունը, որտեղ ասվում է, որ ձեռագիրը եղել է նոր Նախիջևանում, հիշատակագրության տակ մակագրված է «Գրել...» (այսինքն՝ Գր. Լուսավորչի եկեղեցի) (էջ 285ա)։ Թեմական դպրոցում ձեռագիրն ստացել է 18 գույքահամարը։ 1922 թվականին այս ձեռագիրը, ուրիշ շատ ձեռագրերի հետ միասին, դառնում է Երևանի գրականության թանգարանի սեփականությունը և ստանում 191 համարը. այնտեղից էլ 1938 թվականին բերվում է Մատենագարան և գրանցվում 8000 գույքահամարի տակ։

Զեռագիրն սկզբից ունի մագաղաթյա երկաթագիր շորս պահպանակ, ապա համարակալված մագաղաթյա վեց թերթ միջին երկաթագիր երկայում գրությամբ (ավետարանի մասեր), որոնք կտրտված են այնպես, որ թվում է պետք է օգտագործված լինեն որպես մի այլ ավելի փոքրածավալ ձեռագրի պահպանակներ։ Այս նույն վեց թերթի ավելի մանրացված շորս հատակուրը փակցված է ձեռագրի վերջում՝ հիշատակարանից առաջ, դարձյալ առանց համարակա-

14 Լ. Ա. արքան, Կիլիկյան մանրանկարչությունը XIII—XIII դդ., էջ 96։

15 Զեռագրի մանրանկարները հիշեցնում են ուշ շրջանի Ղրիմի մանրանկարչական ոճը։

լելու: Բոն ձեռագիրն սկսվում է ավետարանիների ցանկով (էջ 1ը—3ա), 4—20 թերթերում տեղադրված են XVI—XVII դարերի բոլորովին այլ մանրանկարչական գպրոցի տերունական նկարներ, որոնք չեն պատկանում ձեռագրին: Չեռագրի 21—28 թերթերը վերօհիշյալ կիլիկյան ավետարանի ութ խորաններն են, որոնք փակցված են անկանոն դասավորությամբ:




Նկ. 2

Այս խորանները բոլորն էլ մկրատահատված են, իրարից անջատված, կտրտված են բոլոր խորանների վերևի գլխազարդ թոշունները (նկ. № 2, 3) և որոշ խորանների կողքերի վերին լուսանցազարդերը: Ութ թերթ խորանները պարունակում են լրիվ տասը կանոնները, իսկ մի թերթ խորանն էլ՝ եվսեբիոսի նկարը. ընդամենը ինը նուրբ մագաղաթյա թերթիկներ՝ նկարազարդված մեկական էջերով: Բացակայում էր Կարպիանոսի թերթը, այն էլ գտանք Մատենադարանի ցուցասրահում, որտեղ մեր որոնած թերթը ցուցադրված էր որպես XIV դարի մանրանկարչական պատառիկի նմուշ: Այս ոլատառիկը բերվել է Գրական թանգարանից, որտեղ զրանցված է եղել 90 համարի տակ. Մաշտոցյան մատենադարանում դարձել է սկզբում № 7661 ձեռագիրը, ապա № 1031

պատառիկը: Սա նույնպես միացվեց մեր պատառիկներին և այսպիսով ամբողջաշան խորանները՝ թվով տասը թերթ:

Այս պատառիկների մանրազնին համեմատությունը № 3033 ձեռագրի խորանների հետ, համոզեց մեզ, որ դրանք միևնույն մանրանկարչական դպրոցի խմբին են պատկանում, բայց ընդօրինակություն չեն: Այս պատառիկները կազմունեն նաև № 7690 ձեռագրի հետ. ճիշտ է, իրենց շափերով նույնն էին, ինչ որ Կիրակոսի ավետարանը, սակայն չէին համապատասխանում իրենց մանրանկարչական գունաշարով: Բացի դրանից՝ № 7690 ձեռագրիրը սկսվում է Մատթեոս ավետարանիշով, որը հենց ձեռագրի Ա. պրակի սկիզբն է, իսկ խորանները սովորաբար դրվում են ավետարանիշից առաջ:



Նկ. 3

Մեր պատառիկների սկզբի խորանները նույնպես ինչ-որ ձեռագրի Ա. պրակին են, իսկ վերջին երկու խորանը մտնում են Բ պրակի մեջ: Նշանակում է այս թերթիկները չէին կարող պատկանել 7690 ձեռագրին, բայց Հռոմեացի դպրոցի մանրանկարներ են:

Նոր Նախիջեանից թերված ձեռագրերից մեկի քարտում պահած էր. «Ձեռագիր ԺԴ դար, շունի Հիշատակարան, պոկված են խորաններ»: Դա Մատենագարանի № 8321 ձեռագիրն էր (Նոր Նախիջեանի № 23-ը):

Առաջին իսկ հայացքից պարզվեց, որ մեր խորանները պոկված են այս ձեռագրից:

Ձեռագիրը մագաղաթյա է, սակայն վերանորոգված է թղթյա ձեռագրով: Սկզբից ունի թղթյա երեք թերթ՝ ավետարանիշների ցանկը, շորրորդ թերթը, որը նույնպես թղթյա է, Մատթեոս ավետարանիշն է՝ միակ պահպանված ավետարանիշը, այն էլ հետագայի: Չորսական թղթյա ցանկեր դրված են նաև Մարկոս և Ղուկաս ավետարանիշների անվանաթերթերից առաջ (թերթ 99—101 և 163—166): Այնուհետև թղթյա ձեռագիր է 186 թերթից սկսած մինչև վերջ՝ 345 թերթը: 266 թերթը իրենից ներկայացնում է Հովհաննես ավետարանիշի անվանաթերթը, նկարված երկգույն՝ կապույտ և մանիջակագույն հասարակ մի կիսախորան, ունի նաև նույն գույններով արված հասարակ լուսանցաղարդեր:

Բուն ձեռագիրն սկսվում է 5-րդ թերթից՝ Մատթեոս ավետարանիշի անվանաթերթով և շարունակվում է մինչև 185 թերթը՝ Ղուկասի ավետարանի մի մասը: Ձեռագրի մեծությունն է $16,5 \times 12$, գրությունը՝ երկսյուն գեղեցիկ բոլորգիր: Ունի լուսանցաղարդեր, որոնք բնորոշ են XIII դարի կիլիկյան վաղ շրջանի ձեռագրերին:

Ձեռագրի վերակազմումը և լրացումը թղթյա ձեռագրով, պետք է, որ կատարված լինի XVI դարում, Ղրիմում:

Հայտնի է, որ ընդհանրապես կիլիկյան ձեռագրերի թե՛ լուսանցքներում և թե երկսյուն գրության երիտներում այսունազծեր չեն լինում: Սակայն № 8321 ձեռագրի մագաղաթյա և թղթյա թերթերում կան կարմիր սյունազծեր: Մի շարք միաստեր թույլ են տալիս ենթագրել, որ այդ սյունազծերն արված են Ղրիմում՝ վերանորոգման ժամանակ:

Ձեռագրի, ինչպես և պատառիկ խորանների եղբերը ներկված են կարմիր գույնով. նույն ձեռով ներկված են նաև այդ ժամանակ Ղրիմում կազմված մի խումբ ձեռագրերի եղբեր¹⁶: Կասկած չկա, որ ձեռագրիր Ղրիմում վերանորոգելու ժամանակ, խորանները եղել են նրա մեջ:

Ձեռագրի վերջին վերանորոգումը կատարվել է Մատենադարանում 1940-ական թվականներին (առանց խորանների): Այստեղ, ձեռագրի որոշ մաշված թերթերի ծայրեր վերանորոգվել են թղթյա պատառիկներով, որոնց երիտները ներկված չեն և վրան չունեն սյունազծեր: Փոխվել է նաև ձեռագրի կազմը: Կաշեկազմ ստվարաթղթի Ա. և Բ երեսներին փակցված են իր նախկին կազմի մաշված կաշիները, իսկ մեջքը վերանորոգված է սև կաշվով: Պահպանված է կանաչ մետաքսն պատառը:

Քանի որ ձեռագիրը շունի Հիշատակարան, հետեարար նրա գրության տեղին ու ժամանակը որոշելու համար գիմում ենք նրա մանրանկար խորանների օդնությանը:

Ինչպես վերը նշվեց, մանրակրկիտ ուսումնասիրությունը ցույց տվեց, որ այս խորաններն իրենց ընդհանուր նկարչական զարդարենք, որոշակիորեն արտահայտում են Հռոմեացի դպրոցի մանրանկարչության ոճը: Սակայն ան-

¹⁶ Մրանք հավանաբար կազմվել են մինույն կազմատանը, քանի որ այդ ձեռագրերից շատերն ունեն X—XI դարի մինույն ավետարանի կտրտված թերթերից պահպանակներ, որոնք առանձնացվեցին և միացվեցին իրար (թվով 16 թերթ):

Հրաժեշտ էր գտնել ավելի մոտ նմանություն ունեցող նկարագարված ձեռագրեր, քան նշված № № 3033 և 7690 ձեռագրերն են:

Հոռմկայի XIII դարի 50-ական թվականների լովազոյն վարպետ ժաղկողներից է Հովհաննեսը, որը հավանաբար եղել է նույն դպրոցի նշանավոր նկարիչ Թորոս Ռոսլինի ուսուցիչը:

Հայտնի է Հովհաննեսի նկարագարդած 1253 թվականի ավետարանը, որն այժմ գտնվում է Վաշինգտոնի Ցրիբի պատկերասրահում¹⁷:

Մեր պատառիկ խորանների համեմատությունը Հովհաննեսի նկարած խորանների հետ բերում է այն համոզման, որ № 8321 ձեռագրի նկարից կամ պետք է Հովհաննեսը եղած լինի, կամ էլ մեկը, որն անմիջապես օգտվել է Հովհաննեսի նկարագարդած ձեռագրերից: Այդ նմանությունը նկատելի է յուրաքանչյուր խորանի դարդածելի, թոշունների, լուսանցաղարդերի և զարդանկարների միջև:

Գարեգին Հովսեփյանը 1943 թվականին հրատարակել է «Պոթրթառնում ապրող պարոն Նազարեթ Աղամյանին պատկանող մի ձեռագրից մնացած ութիւնը խորաններ: Այդ պատառիկները համեմատելով Թորոս Ռոսլինի նկարագարդած ավետարանների խորանների բազմաթիվ դարդածելերի, լուսանցաղարդերի, թոշունների ու ծառերի հետ, մեծանուն գիտնականը համոզվել է, որ դրանք հավանաբար պատկանում են Ռոսլինին:

«Երբ առաջին անգամ տեսանք այդ շքեղ և գեղեցիկ խորանները, — գրում է Հովսեփյանը, — իսկույն մեր մտքով անցավ, թե դրանք Թորոս Ռոսլինի գործերը պիտի լինին...»: Այսուհետեւ ամենացնում է, «Այժմ սքանչելի այդ ութիւնը խորանների համեմատությամբ՝ Թորոս Ռոսլինի թվականով և տեղով հայտնի գործերի հետ, առավել ևս հաստատվում է, և համոզում դառնում մեր նախկին տըպավորությունը, թե դրանք Թորոսի գործերն են»¹⁸:

Մեր պատառիկների համեմատությունը Հովսեփյանի այդ թերթիկների հետ, նույնակա բերում է այն համոզման, որ դրանք միևնույն ժամանակի և միևնույն դպրոցի ձեռագրերից են՝ մանրանկարված Հովհաննեսի կամ Ռոսլինի կողմից:

Թորոս Ռոսլինի նկարագարդած ձեռագրերից, դժբախտարար շունենք Մատենագարանում ոչ մի օրինակ, եթե Հաշվենք ուշ շրջանի թղթյա մի ձեռագրի վերանորոգման ժամանակ լրացված մազաղաթյա թերթերը, որոնց մանրանկարները պրոֆ. Ս. Տեր-Ներսիսյանը վերագրում է Ռոսլինին: Այստեղ, բացի լուսանցաղարդերից ու զիխաղարդերից, կարելի է տեսնել Քրիստոսի երկու որիմանկար: Սակայն ունենք երուսաղեմից ստացված Ռոսլինի ձեռագրերի մանրագարավենները և ապա տպագրված օրինակներ բազմաթիվ գրքերում ու ալրումներում, որոնք հնարավորություն են տալիս համեմատելու մեր ձեռագրի նկարները Ռոսլինի նկարների հետ:

Բերենք ձեռագրերի ընդհանրությունները ցույց տվող օրինակներ.

№ 8321 ձեռագրի նվազերիում և Կարպիտանոսի դիմանկարները երբ համեմատում ենք Թորոս Ռոսլինի 1260 թվականի ավետարանի նույն նկարների հետ, տեսնում ենք, որ ընդհանրություններ կան նկարված մարդկանց կեցվածքի, մաղերի սանրվածքի մեջ: Խորանի բառանկյան հիմքի հորիզոնական սյու-

¹⁷ Ter-Nersessian S., Armenian Manuscripts in the Freer Gallery of Art, Washington, 1963.

¹⁸ Գ. Հովսեփյան, Նյութեր և ուսումնասիրություններ..., էջ 42,

նազարդը և կողքերի ներքեխ լուսանցքի ծառերն ու նրանց վրայի թոշունները նույնն են:

Կանոն Ա—Բ.—Այս խորաններում նման են մարմարակերպ եռասյունները և խորանի վերին լուսանցքի մոմերը:

Կանոն Գ—Դ—Ե., նույնն են խորանի ներքեխ լուսանցքի արմավենիները և նրանց վրա կանգնած բուերը: Երդ թերթում նույնն են քառանկյան զարդերը և ներքեխ լուսանցքի արմավենիները:

Կանոն Ե—Զ—Է.—Նման են խորանների քառանկյունիների ներսի զարդերը, զուգահեռ զարդասյունները, ուղղահայաց մարմարակերպ եռասյունների մոտիվը, ներքեխ լուսանցքների թոշունները:

Կանոն Թ—Ժ—Ժ.—Նման են խորանների քառանկյունիների շրջանակի զարդանկարները, քառանկյան մեջ ծիածանածել կիսաշրջանակները, խորանի ներքեխ զուգահեռ սյան զարդանկարները, ինչպես նաև ներքեխ լուսանցքի թոշունները:

Կանոն Ժ.—Ժ.—Նման են խորանի քառանկյան միջի զարդերը:

Կան և առանձին զարդերի նմանություններ ո'չ անպայման նույն խորանի մեջ, օրինակ, ոսկե գծիկներով արված ցանցակերպ զարդերը:

Չնայած շունենք գունային համեմատության համար օրինակ, որ թերևս շատ կարենու և որոշակի դեր էր խաղալու, սակայն նշված նմանությունները բավական են համոզվելու, որ սրանք, չնայած բացարձակ ընդօրինակություններ են, բայց միևնույն վրձնի դործ են: Հենց դա հատկանշական էր Ռուսլինի համար: Նա երբեք նույնությամբ շէր կրկնում ու ուրիշին և ոչ էլ ինքն իրեն, այլ միշտ աշխատում էր սահղծագործաբարուր:

Նմանություն կա նաև անվանաթերթերի և լուսանցազարդերի միջև: Հատկապես Մարկոս և Ղուկաս ավետարանիշների անվանաթերթերի սկզբնատառ կենդանագրերը խիստ նման են Ռուսլինի նույն սկզբնատառերին՝ XI—XII դարերի բուն հայկական զարդագրերի նմանությամբ: Խսկ Հովհաննես ծաղկողի մոտ սկզբնատառերն այլ են: Լուսանցազարդերում կրկնվում են միևնույն օդաձևերը: Երկուսի մոտ էլ աշքի են ընկնում բուսական զարդերն ու մատուռները: Միայն, Ռուսլինի ձեռագրի լուսանցքներում կան նաև սրբանկարներ, որոնք բացակայում են մեր ձեռագրում:

Այժմ տեսնենք, թե ինչ համոզիլ փաստեր կան և նույն Գ-ի նկարը ձեռագրին վերագրելու համար.

1. Նկարը մկրատահատված է ճիշտ այնպես, ինչպես մյուս բոլոր խորաններն ու անվանաթերթերը և ամենայն հավանականությամբ միևնույն մարդու կողմից:

2. Էնոնի նկարի մազաղաթը իր որակով նման է մեր ձեռագրի խորանների ողորկ մազաղաթին, չնայած ձեռագիրը բաղկացած է տարբեր որակի մազաղաթներից (հաստ, բարակ, ծակոտկեն):

3. Մեր ձեռագրի Մատթեոսի անվանաթերթի Գ գլխատառը, որը ձեռագրում պահպանված միակ մարդապատկերն է, ուշագրավ է իր կեցվածքով, հագուստի ծալքերի մեջ նկատելի դինամիկ շարժումով, դիմքի մշակումն ու արտահայտչակայնությունը կարելի է նույնացնել Ռուսլինի 1262 և 1268 թվականների ձեռագրերի Գ տառի հետ, սրանք, շատ թեթև տարբերություններ ունենալով, խիստ նման են իրար: Միաժամանակ այս դիմանկարները նման են Էնոնի նկարի գլխավերներմ նկարված զույգ հրեշտակներին, այսուղ զարձյալ նկատելի է

Հազուստի ծալքավորման միևնույն մշակումը, մազերի սանրվածքը, դրանց ավելացրած նաև գունային միևնույն երանգավորումը դեմքի մշակման և հագուստի մեջ:

4. Զեռագրի Ա. պրակն սկսվում է Եվսեբիոսով և վերջանում ութերրորդ խորանով, որը լինում է ութ թերթ: Բ պրակն սկսվում է իններորդ խորանով և տասներորդ խորանի հետ կազմում են երկու թերթ: Այսպիսով՝ խորանները վերջանում են Բ պրակի սկզբի երկու թերթով: Խորաններից անմիջապես հետո, Մատթեոս ավետարանիչն է իր տնօվանաթերթի հետ և ապա երկու թերթ տեքստով վերջանում է Բ պրակը, որ բաղկացած է վեց թերթից. նշանակում է այստեղ բացակայում է երկու թերթ:

Քանի որ տեքստից ոչ մի թերթ չի բացակայում, ավետարանիչն ու անվանաթերթն էլ տեղում են, մնում է ենթադրել, որ 9—10 խորանից հետո պետք է եղած լինի ևս երկու թերթ, որպեսզի տետրակը զառնա ութ թերթից բաղկացած:

Իսկ ի՞նչ կարող է լինել այդ երկու թերթի բովանդակությունը:

Հայտնի է, որ Հոռմկլայի ձեռագրերի մեծ մասը, որոնք պատվիրել է Կոստանդին կաթողիկոսը, խորաններից անմիջապես հետո ունենում են երկու թերթից բաղկացած ձոն, նվիրված ձեռագրի տիրոջը՝ թագավորին, թագավորական բարձր պաշտոնյային, կամ որևէ պատվավոր անձի:

Քանի որ մեր ավետարանը նույնպես Հոռմկլայի ձեռագրերից է, ուրիմն շատ հավանական է, որ բացակա երկու թերթերի վրա ձոնն է եղել, ուստի այդ երկու թերթերը պետք է լինեն հենց Լեռնի նկարը, իր ձոնի հետ միասին:

Թե ով է Լեռնի դիմանկարի ստեղծողը, որոշակիորեն շենք կարող ասել, որովհետեւ նկարի դեմքը մաշված է, չնշված: Չնայած նկարում եղած ուրիշ շատ մանրամասներ հիշեցնում են Թորոս Ռոսլինին:

Տեր-Մովսիսյանը նույնպես հայտնում է այն կարծիքը, թե Լեռնի դիմանկարը հավանաբար Թորոս Ռոսլինն է նկարել:

Հայտնի է, որ ձեռագրի ստեղծման ժամանակ, մոտավորապես 1253 թվականին, Հովհաննես ծաղկողն ավարտեց իր մի ավետարանը արդեն ծերացած հասակում և շատ հավանական է, որ այս ձեռագիրը նույն ժամանակում նկարագրելու համար, հանձնած լիներ իր աշակերտին՝ Թորոս Ռոսլինին: Հետագայում, ինչպես հայտնի է, Լեռն Գ թագավորի դիմանկարները, ինչպես և որոշ պալատականների դիմանկարներ արված են Ռոսլինի կողմից:

Այսպիսով, գաղթի ու թալանի հետևանքով տեղից տեղ թափառած շատ ձեռագրերի հետ միասին, երկար ու արկածալի հանապարհ է անցել Լեռն Գ թագավորին պատկանող այս ավետարանը և ի վերջո, քայլայված ու թերթահան, վիրավոր վիճակում ապաստան է գտել Մաշտոցյան մատենադարանում: Լեռն թագավորի դիմանկարը մոտ 75 տարի ուրիշ ձեռագրում մնալուց հետո զայվիր տեղը, նրան միացան նաև կորած խորանները: Այժմ մենք ունենք Հոռմկլայի նկարչական գլուխցին պատկանող մի շատ արժեքավոր ձեռագիր, որը նկարագրված է 1254 թվականին, մեծ հավանականությամբ նշանավոր մանրանկարիչ Թորոս Ռոսլինի ձեռքով:

А. Б. ГЕВОРКЯН

ЕВАНГЕЛИЕ ЦАРЯ ЛЕВОНА ТРЕТЬЕГО

Р е з ю м е

Вместе с армянскими рукописями Новой Нахичевани в Матенадаране имени Маштоца был доставлен в свое время фрагмент портрета Киликийского армянского царя Левона Третьего (1236—1288). Оторванный от рукописи—оригинала, портрет впоследствии был приклеен к другой рукописи. Портрет-работа выдающегося киликийского художника исполнен с большим мастерством и представляет большую ценность для изучения истории средневекового армянского портретного искусства. Поэтому фрагмент привлек к себе в свое время внимание ученых. Последние по разным поводам пытались найти рукопись, к которой был первоначально приложен портрет.

Факты, приведенные в настоящей статье, показывают, что портрет царя Левона Третьего принадлежит рукописи Матенадарана № 8321, также доставленной из Новой Нахичевани. Как миниатюры этой рукописи, так и портрет царя Левона по своему стилю принадлежат к Ромкрайской школе миниатюр и особенно напоминают портреты, принадлежащие кисти выдающегося мастера этой школы Тороса Рослина. Это обстоятельство дает основание полагать, что портрет царя Левона принадлежит кисти Тороса Рослина.

A. B. GEVORKIAN

L'EVANGILE DU ROI LEON III

L'article concerne un fragment de manuscrit au portrait du roi arménien de Cilicie, Léon III (1236—1288). Ce fragment se trouve fixé à l'intérieur d'un des manuscrits arméniens de la «Nouvelle-Nakhitchévan» conservés actuellement au Maténadaran d'Erévan.

Le portrait exécuté avec art présente un intérêt incontestable pour l'histoire de la peinture portraitiste arménienne du moyen âge. Les spécialistes s'efforcèrent très longtemps d'en découvrir le manuscrit d'origine.

L'auteur de l'article montre que ce fragment appartient au ms Maténadaran 8321 du fonds de la Nouvelle-Nakhitchévan, dont les miniatures, tout comme le portrait de Léon III, ne sont pas sans nous rappeler, par le style d'exécution, celles de Hromkla et plus spécialement les peintures du célèbre maître Thoros Roslin qu'on est ainsi en droit de considérer comme l'auteur du portrait.